ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՁԵՆԻՏ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ2 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	001	Բաճկոն ձմեռային ամենօրյա Բաղկացած է անջրանցիկ բաճկոնից և բաճկոնի վրա ինքնակպչուններով ամրացված տարբերանշաններից և գրվածքներից: Բաճկոնը արտադրվում է 100% պոլիէսթեր, 260 գ/մ2 բաղադրությամբ, անջրանցիկ մուգ կանաչավուն երանգի (ըստ նմուշի) կտորից : Գործվացքի բաղադրությունը՝ համաձայն ԳՈՍՏ 4659-79, ԻՍՕ 1833-2001, մակերեսային խտությունը՝ համաձայն ԳՈՍՏ 3811-72, ներկի կայունությունը՝ լվացման,թորած ջրի, քրտնքի և չոր շփման նկատմամբ, համաձայն ԳՈՍՏ 9733-83, նվազագույնը 4 բալ : Բաճկոնը՝ հետծալվող օձիքով է, որին 7 հատ 13-14 մմ - անոց կոճակներով ամրացված է հանովի դնովի մորթե օձիքը (ըստ նմուշի): Այն կարված է արհեստական մորթուց՝ 1200-1300 գրամից ոչ պակաս մակերեսային խտությամբ մուգ մոխրագույն արհեստական մորթուց, մորթախավի բարձրությունը 11-13մմ: Ունի օձիքի ներսամասում կարված օղակաձև կախիչ: Բաճկոնի առաջամասը և թիկունքամասը մշակված է 300 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնե տաք ներդիրով, որը մզդակարված է քամիապաշտպան շերտով, իսկ թևքերը՝ 200 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնե տաք ներդիրով, որը նույնպես, մզդակարված է քամիապաշտպան շերտով: Բաճկոնի ներսի մասը, ներառյալ թևերը, ամբողջությամբ աստառապատ է: Աստառը՝ կանաչավուն գույնի 90 գ/մ2 գործվածքից, բաղադրությունը՝ 100 %

		վիսկոզա: Թիկունքը վերին կտրվածքով, կոկետկայով, կոկետկայի եզրից ներքև՝ երկայնական կտրվածքով: Բաճկոնի փեշերի ներքին եզրերը մշակված են 2.0-2.5 սմ լայնության զարդակարով: Կոճկվում է կենտրոնական կանաչ գույնի պլաստմասե շղթայական կոճկվածքով՝ մեկ կամ երկու գլխիկանի № 6 կայծակ շղթայով: Շղթայի եզրերը միմյանց ամրանում են բաճկոնի ստորին եզրից 5-6սմ վերևից և ձգվում մինչև կրծքամասի գրպանների կափույրի ստորին եզրը: Շղթայի վրայից, ստորին եզրից մինչև օձիքի եզրը, երկայնակի անցնում է 5.5-6.0 սմ լայնությամբ փակ կափույրը (հաստացված), որը կայծակ շղթայի վրայից ՝ ստորին եզրից սկսած, կոճկվում է 4 հատ հավասարաչափ հեռավորություններով տեղադրված, մետաղական կոճգամներով և մեկ կոճգամ ամրացնում է օձիքը : Կոճգամների գլխիկները կոճկված վիճակում չեն երևում: Կողային թեք գրպանների վերին եզրից դեպի վերև 1.5-2.5 սմ հեռավորության վրա մշակվում է փակ տեսակի կարգավորվող սև կամ պաշտպանական գույնի, 0.5-0,6սմ տրամագծով էլաստիկ քուղ՝ պլաստմասե սեղմակ կարգավորիչներով: Կրծքամասի աջ և ձախ մասերում մշակված են կափույրներով, վրադիր ծավալուն՝ կախված չափսերից 15-16 սմ լայնության և 16-18 սմ երկարության մեկական գրպաններ, որոնց 3.8-4.2 սմ լայնության կափույրները կրծքամասի երկարությամբ ամբողջական են, կողքերից փակ, կոճկվում են 2.5×12.5 սմ չափսի մուգ կանաչ երանգի կպչուն ժապավեններով: Փեշերի ձախ և աջ մասերում մշակված են վերին մասերը դեպի ներս թեքված, ներկարված, 18.0-18.5 սմ բացվածքով՝ 2.0-2.5 սմ լայնությամբ շերտիկով գրպաններ, որոնք կոճկվում են կանաչ երանգի պլաստմասե № 4 կայծակ շղթայով: Բաճկոնի ներսից՝ ձախ կրծքամասի հատվածում, երեսացու կտորով մշակված է 12սմ*16սմ չափսի կոճակով կոճկվող վրադիր ծոցագրպան: Կրծքամասի աջ և ձախ գրպանների կափույրների վրա՝ գրպանների լայնությանը համաչափ, մշակվում է 2.5×12.5 սմ չափսերի կանաչ գույնի կպչուն ժապավեններ՝ ՀՀ ԱԱԾ և զորատեսակի կամ ստորաբաժանման անվամբ գրվածքները, ինքնակպչունով փակցման համար: Ուսադիրների շրջանում՝ յուրաքանչյուր ուսին, մշակվում են 14,5-15,5սմ երկարությամբ և 4,3 սմ լայնքով 14մմ-անոց կոճակով և օղակով կոճկվող , նույն կտորից պատրաստված, երկշերտ ախլակային ուսադիրներ, որոնք միջնամասում անցնում են ֆիքսատոր օղակի միջով: Բաճկոնի թևքերի եզրերը՝ 2,0սմ յայնքով, զարդակարված են և ներսից ունեն 6,5-7,0սմ լայնքով ներկարված մուգ կանաչ գույնի, երկշերտ գործած մանժետներ: Աջ և ձախ թևքերի վրա ուսակարից 8.5-9.0 սմ ներքև մշակված են 19-20 սմ երկարության և 13-13.5 սմ լայնության վրադիր երկայնակի

		գրպաններ, որոնք կոճկվում են դեպի կենտրոնական շղթա ներկարված մուգ կանաչ երանգի պլաստմասե գաղտնի կայծակ շղթայով: Ձախ և աջ թևքերի վրա մշակվում են սեպաձև տեսքով 7.0×9.0 սմ չափսի ինքնակպչուններ: Ինքնակպչունով ամրացող տարբերանշաններն են՝ սեպաձև թևքանշան ՀՀ զինանշան՝ Հայաստանի Հանրապետություն գրվածքով, սեպաձև թևքանշան ՀՀ ԱԱԾ տարբերանշանը, կրծքին փակցնելու համար ասեղնագործ ինքնակպչուններով գրվածքներ՝ ՀՀ ԱԱԾ և ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ՁՈՐՔԵՐ: Տարբերանշանների քանակները, ըստ տեսակների, կտրամադրվեն Պատվիրատուի կողմից, հաստատման նմուշների հաստատումից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Բաճկոնի ձախակողմյան փեշին, ներքևի եզրից 5.0-7.0 սմ բարձրության վրա, ներսի կողմից պետք է կարված լինի պիտակ: Պիտակի վրա նշված՝ տեսականու չափսը, արտադրող և/կամ մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը, պայմանագրի ծածկագիրը և խնամքի վերաբերյալ տեղեկատվությունը: Բաճկոնի շղթայի գլխիկից պետք է կախված լինի չափս-հասակային թղթյա ստուգիչ պիտակ՝ վրան նշված տեսականու չափսը, արտադրող և մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար՝ Պատվիրատուի պահանջի դեպքում, մատակարար կազմակերպությունը, պարտավոր է իր ֆիանասական միջոցների հաշվին ներկայացնել ՀՀ-ում հավաստագրված արտոնագրված կամ անհրաժեշտության դեպքում էտալոնային փորձագիտական լաբորատորիայի կողմից տրված երեսացու գործվածքի բաղադրության, ներկի կայունության, մակերեսային խտության, սինտեպոնի, աստառի մակերեսային խտության և այլ օգտագործված նյութերի վերաբերյալ լաբորատոր հետազոտության եզրակացություն: Ընդ որում նմուշառումը պետք է կատարվի ընդունող ստորաբաժանում մատակարարված խմբաքանակից՝ լաբորատորիայի կողմից գործուղված համապատասխան մասնագետի մասնակցությամբ: Փաթեթավորումը առնվազն եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ մինչև 5 հատ, յուրաքանչյուրը պոլիէթիլենային թափանցիկ պարկով, մեկ պարկի մեջ 1 հատ: Արկղերը պիտակավորված կամ տպագրված, որի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպությունների անվանումը, արտադրման տարեթիվը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ЗЕНИТ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ2 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
1	001	Зимняя повседневная куртка Состоит из водонепроницаемой куртки и различных знаков различия и надписей, прикрепленных к куртке с помощью липучек. Куртка изготовлена из 100% полиэстера плотностью 260 г/м2, водонепроницаемой ткани темно-зеленого оттенка (по образцу). Состав ткани - согласно ГОСТ 4659-79, ISO 1833-2001, поверхностная плотность - согласно ГОСТ 3811-72, устойчивость краски к стирке, дистиллированной воде, поту и сухому трению - согласно ГОСТ 9733-83, не менее 4 баллов. Куртка оборудована откидным воротником, к которому с помощью 7 пуговиц диаметром 13-14 мм крепится съемный воротник из меха (по образцу). Сшита из искусственного меха темно-серого цвета с поверхностной плотностью не менее 1200-1300 грамм, высота мехового слоя 11-13 мм. Внутри воротника пришита кольцеобразная петля для подвешивания. Передняя и задняя части куртки обработаны теплой синтепоновой вставкой плотностью 300 грамм, покрытой ветрозащитным слоем, а рукава - теплой синтепоновой вставкой плотностью 200 грамм, также покрытой ветрозащитным слоем. Внутренняя часть куртки, включая рукава, полностью подкладная. Подкладка выполнена из зеленоватой ткани плотностью 90 г/м2, состав - 100% вискоза. Спинка с верхним вырезом, кокеткой, ниже края кокетки выполнен

		продольный шов. Внутренние края передних частей куртки обработаны отделочной тесьмой шириной 2,0-2,5 см. Куртка застегивается центральной застежкой-молнией зеленого цвета № 6 с одним или двумя бегунками. Концы молнии крепятся друг к другу на 5-6 см выше нижнего края куртки и тянутся до нижних краев клапанов карманов на груди. По молнии, от нижнего края до воротника, проходит продольный клапан шириной 5,5-6,0 см (утолщенный), который застегивается на 4 металлических кнопки, равномерно расположенные по длине, и одна кнопка крепит воротник. Кнопки при застегивании не видны. С верхнего края боковых наклонных карманов на расстоянии 1,5-2,5 см вверх обработана закрытая регулируемая эластичная тесьма диаметром 0,5-0,6 см черного или защитного цвета с пластиковыми фиксирующими зажимами. Справа и слева на груди выполнены клапаны объемных карманов, размеры которых зависят от размера куртки: ширина 15-16 см, длина 16-18 см, клапаны шириной 3,8-4,2 см по всей длине груди полностью закрытые с боков, застегиваются липучками размером 2,5×12,5 см темно-зеленого оттенка. Слева и справа на передних частях куртки выполнены карманы с верхней частью, загнутой внутрь, и отделочной полосой шириной 2,0-2,5 см, с отверстием 18,0-18,5 см, застегивающиеся пластиковой молнией зеленого цвета № 4. Внутри куртки, на левом боку грудной части, выполнен накладной внутренний карман с клапаном и застежкой на пуговицу размером 12×16 см. На клапанах карманов с обеих сторон груди, по ширине карманов, пришиты липучки размером 2,5×12,5 см зеленого цвета с надписями СНБ РА и названием типа войск или подразделения для крепления на липучках. На погонах, по одному на каждом плече, выполнены двуслойные тканевые погоны длиной 14,5-15,5 см и шириной 4,3 см с застежкой на 14 мм пуговицу и петлей, проходящие в средней части через фиксирующее кольцо. Края рукавов отделаны отделочной лентой шириной 2,0 см, внутри расположены двуслойные манжеты шириной 6,5-7,0 см, окрашенные в темно-зеленый цвет. На правом и левом рукавах, на расстоянии 8,5-9,0 см от плечевого шва вниз, выполнены продольные накладные карманы длиной 19-20 см и шириной 13-13,5 см, застегивающиеся на скрытую пластиковую молнию темно-зеленого цвета, направленную к центральной застежке. На левом и правом рукавах пришиты треугольные липучки размером 7,0×9,0 см. На липучках закреплены следующие знаки: треугольный нарукавный знак с гербом РА и надписью «Республика Армения», треугольный

		нарукавный знак с эмблемой СНБ РА, вышитые липучки для крепления на груди с надписями «Служба национальной безопасности РА» и ПОГРАНИЧНЫЕ ВОЙСКА. Количество знаков различия по типу изделия предоставляется Заказчиком в течение пяти рабочих дней после утверждения образцов. Этикетка должна быть пришита к левому краю куртки, на расстоянии 5,0-7,0 см от нижнего края, с внутренней стороны. На этикетке должны быть указаны размер ассортимента, наименование производителя и/или поставщика, год изготовления, код договора и информация по уходу. На верхней части цепочки куртки должна быть прикреплена контрольная этикетка размером и высотой бумаги с указанием размера ассортимента, наименованиея производителя и поставщика, а также года изготовления. По требованию Заказчика, для каждой поставленной партии, Поставщик обязан за счет собственных финансовых средств представить заключение лабораторного исследования, выданное аккредитованной или, при необходимости, эталонной испытательной лабораторией, сертифицированной в РА, о составе лицевой ткани, устойчивости окраски, поверхностной плотности, характеристиках синтепона, подкладки и других использованных материалов. При этом отбор образцов должен осуществляться из поставленной партии с участием соответствующего специалиста, направленного лабораторией, в присутствии принимающего подразделения. Упаковка: в трехслойных картонных коробках, в коробках до 5 шт., каждая в прозрачных полиэтиленовых пакетах, по 1 штуке в 1 пакете. Размеры коробок и пакетов должны соответствовать размерам униформы, чтобы она не помялась. На коробках должна быть этикетка или распечатка, на которой должны быть указаны наименование ассортимента, количество, размеры, наименование поставщика и организации-изготовителя, год изготовления.